ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2022 թվականի մայիսի 31-ից հունիսի 4-ը շրջակա միջավայրի նախարարի տեղակալ Արամ Մեյմարյանին Շվեդիայի Թագավորություն (քաղաք Ստոկհոլմ) գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**
   Արամ Մեյմարյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**
   Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ**

   Ստոկհոլմ (Շվեդիայի Թագավորություն)
   2022թ. մայիսի 31-ից հունիսի 4-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**
   Միավորված ազգերի կազմակերպություն

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**
   Մասնակցություն «Ստոկհոլմ+50. առողջ մոլորակ բոլորի բարգավաճման համար, մեր պատասխանատվությունը, մեր հնարավորությունը» (Stockholm+ 50: a healthy planet for the prosperity of all – our responsibility, our opportunity) խորագրով բարձրաստիճան միջազգային հանդիպմանը:

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**
   Համաժողովի ընթացքում քննարկվել են.

- առողջությանը, բարգավաճմանը, խաղաղությանը և մոլորակին սպառնացող բնապահպանական մարտահրավերներին դիմակայելու համար անհրաժեշտ քայլերը,
- Հայաստանի Հանրապետության կառավարության տեսլականը կանաչ փոխակերպման և կլիմայի փոփոխության նկատմամբ դիմագրավման ուղղությամբ,
- անտառային ազգային քաղաքականության և ռազմավարության նորացման գործընթացը, որը կարևոր գործիք է դառնալու Հայաստանի անտառների կառավարման գործընթացն առավել հեշտացնելու և անտառային ոլորտի շահերը այլ ոլորտների շահերին համապատասխանեցնելու և ներդաշնակեցնելու համար,

- էներգիայի վերականգնվող աղբյուրների մասնաբաժնի ավելացման հաշվին ցածրածխածնային զարգացման ապահովման, ինչպես նաև անտառապատ տարածքների ավելացման և ընդլայնման վերաբերյալ հարցերը:

7. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐ

Շվեդիայի Արտաքին գործերի և Կլիմայի ու շրջակա միջավայրի նախարարությունների կողմից «Ստոկհոլմ+50. առողջ մոլորակ բոլորի բարգավաճման համար, մեր պատասխանատվությունը, մեր հնարավորությունը» խորագրով միջազգային միջոցառմանը ներկայացվել է ելույթ, որի ընթացքում անդրադարձել է կատարվել կլիմայի փոփոխության մարտահրավերների նկատմամբ դիմադրողականության ապահովման գործընթացում շրջակա միջավայրի ոլորտում հարմարվողականության միջոցառումների իրականացման կարևորությունը և Հայաստանի Հանրապետության կառավարության՝ կանաչ ապագայի տեսլականին:

Միջազգային միջոցառման շրջանակում կազմակերպված ընդունելության ընթացքում կայացել են հանդիպումներ Ալժիրի Ժողովրդական Դեմոկրատական Հանրապետության Շրջակա միջավայրի նախարար Սամիա Մոուալֆիի և Բոստվանայի Հանրապետության Շրջակա միջավայրի և զբոսաշրջության նախարար Ֆիլդա Նանի Քերենգի հետ:

Քննարկվել են մարդու կողմից բնության վրա ճնշում գործադրելու հետևանքով վերջին ժամանակներում սրված մարդ-վայրի բնություն կոնֆլիկտի դեպքեր, դրանց լուծմանն ուղղված հնարավոր քայլերը:

Անդրադարձ է կատարվել որսի և որսորդական տնտեսությունների վարման ընթացակարգերին. կողմերը իրականացրել են փորձի փոխանակում:

Քննարկվել է երկուստեք հետաքրքրություն ներկայացնող բնապահպանական խնդիրների շրջանակը, մասնավորապես անդրադարձ է կատարվել կլիմայի կայունացմանը և կլիմայի փոփոխության հետևանքների նկատմամբ հարմարվողականությանը վերաբերող հարցերի:

Քննարկվել է նաև անապատացման դեմ պայքարին և դեգրադացված հողերի վերականգնմանն առնչվող հարցեր:

Կայացել են հանդիպումներ շվեդական միջազգային զարգացման գործակալության՝ Սիդա-ի (Sida) ներկայացուցիչների հետ՝ Սիդա (Sida) շվեդական միջազգային զարգացման գործակալության Արևելյան Եվրոպայի և Եվրոպայի ու Լատինական Ամերիկայի թեմատիկ աջակցության բաժնի ղեկավար Քրիստինա Դանիելսոնի և Լատինական Ամերիկայի և եվրոպայի բաժնի ծրագրերի ավագ համակարգող Յեն Յոհանսոնի հետ:

Քննարկվել են Sida-ի հետ համագործակցության հնարավոր շրջանակներն ու ուղղությունները, իրականացվելիք ծրագրերն ու հայ-շվեդական համագործակցության հեռանկարները շրջակա միջավայրի ոլորտում:

Անդրադարձ է կատարվել «Հզորացնել համայնքների դիմակայունությունը էներգաարդյունավետության և ցածր արտանետումներով զարգացման միջոցով» ծրագրին (բյուջե՝ 1,1 մլն ԱՄՆ դոլար), որի շրջանակներում էներգաարդյունավետ և վերականգնվող էներգիայի ոլորտում ներդրումները կարևոր են հատկապես խոցելի համայնքների համար և ունեն որոշիչ նշանակություն կանաչ վերականգնման համար:

Անդրադարձ է կատարվել կոշտ թափոնների կառավարման ոլորտին:

Հայաստանը CEPA-ի համաձայնագրով («Հայաստան-ԵՄ. համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր») պարտավորվել է կատարելագործել թափոնների կառավարման համակարգը, մասնավորապես Հայաստանում ներդնել EPR (Արտադրողի ընդլայնված պատասխանատվության) համակարգը:

Քննարկվել է նաև ՀՀ Շրջակա միջավայրի և Շվեդիայի շրջակա միջավայրի նախարարության միջև բնապահպանության ոլորտում համագործակցության մասին փոխըմբռնման հուշագրի նախագիծը, որը համաձայնեցվել էր շահագրգիռ գերատեսչությունների հետ, ներկայացվել արտաքին գործերի նախարարություն՝ շվեդական կողմին փոխանցելու համար:

Կողմերը քննարկել են նաև Սևանա լճին առնչվող EU4Sevan ծրագրի շրջանակում իրականացվող միջոցառումները, մասնավորապես՝ համայնքների հետ ծրագրերի իրականացման անհրաժեշտությունը և կեղտաջրերի մաքրման նոր կայանների հիմնման, առկա կայանների արդիականացմանն ուղղված հարցեր

Անդրադարձ է կատարվել կոշտ թափոնների կառավարման ոլորտին:

Հայաստանը CEPA-ի համաձայնագրով («Հայաստան-ԵՄ. համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր») պարտավորվել է կատարելագործել թափոնների կառավարման համակարգը, մասնավորապես Հայաստանում ներդնել EPR (Արտադրողի ընդլայնված պատասխանատվության) համակարգը:

8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Շվեդական կողմը տեղեկացրել է, որ հետաքրքրված է Սևանա լճի շուրջ համագործակցության կառուցմամբ, հատկապես կեղտաջրերի մաքրման հայեցակարգի և կայանների հիմնման ուղղությամբ: Պայմանավորվածություն է ձեռք բերվել կազմել ճանապարհային քարտեզ և ըստ դրա առաջ շարժվել:

Sida-ի ներկայացուցիչները հունիս ամսին Հայաստան այցի ընթացքում նախատեսել են այցելել Սյունիքի մարզ՝ անտառների ընձեռած հնարավորություններն ուսումնասիրելու նպատակով:

Ստոկհոլմ+50 համաժողովի ժամանակ ընդունվել է երեք հիմնական որոշում"

- Ստոկհոլմի հռչակագիր,
- Ստոկհոլմի գործողությունների ծրագիր, որը ներառում է 109 առաջարկություն կառավարությունների և միջազգային կազմակերպությունների համար շրջակա միջավայրի դեգրադացիայի դեմ միջազգային միջոցառումների վերաբերյալ,
- հինգ բանաձևերի շարք, որը խրախուսում է.

1. միջուկային զենքի փորձարկումների արգելքը,
2. շրջակա միջավայրի վերաբերյալ տվյալների միջազգային շտեմարանի կազմումը,
3. զարգացման և շրջակա միջավայրի, միջազգային կազմակերպչական փոփոխությունների հետ կապված գործողություններ ձեռնարկելու և բնապահպանական հիմնադրամի ստեղծման անհրաժեշտությունը:

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Stockholm+50-ի շրջանակներում, ելույթի ընթացքում վերահաստատվել է Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության պատրաստակամությունը համագործակցելու ՄԱԿ-ի բոլոր անդամ երկրների, գործակալությունների, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների և մասնավոր հատվածի հետ՝ համաշխարհային էկոլոգիական օրակարգի առաջմղման նպատակով:

Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ

Արամ Մեյմարյան
08.06.2022թ.